ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> հուլիսի 2025թ. N ՄՈ/700 - Ա

ք. Արմավիր

«ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արմեն Առաքելյանի 2025 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Առաքելյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմեն Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Նարինե Սաֆարյանին:
3. «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Նարինե Սաֆարյանի աշխատավարձի

վճարումը 2025 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 22-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Արմեն Առաքելյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-16 10:02:34 GMT+4
Հավաստագրված է ԿԵՆՏ-ի կողմից

Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ